ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԲՈՎՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Սույն թվականի դեկտեմբերի 25-ին վերաօծվեց Աբովյանի շրջանի Ակունք գյուղի Ս. Կարապետ եկեղեցին: Եկեղեցու վերաօծումը կատարվեց ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի և աջակցությամբ ՀՀ Ռազմական ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի: Ազնվատենչ հայորդու արգասաբեր հոգածությունը պայծառազգեստ դարձրեց Ս. Կարապետ եկեղեցին:

Հավարտ եկեղեցու վերաօծման մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր թեմական առաջնորդը: Պատարագին ներկա էին մարզպետ Կովալենկո Շահգալդյանը, մարզի և թեմի հավատավոր ժողովուրդը: Հընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրը փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ իր քարոզն էլ խարսխելով այն մտքի վրա, որ «Այս եկեղեցին մեր հոգևոր Վեմն է» դառնալու:

ԴԻՎԱՆ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ